

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ  
«Երևաննախագիծ» ՓԲԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ  
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«Երևաննախագիծ» ՓԲԸ տնօրեն՝

Ս. Օհանյան

Երևան – 2020թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....	ԵՎ
ԾՐԱԳՐԵՐ.....	2
2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	4
2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖՈՆԱՅԻՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	4
3. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՎՐԱ.....	6
3.1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	7
3.2 ՍԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԸ.....	8
3.3 ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԱՀՈՍՔԵՐ.....	10
3.4 ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	11
3.5 ԱՂՍՈՒԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	11
4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	12
4.1 ԱՂԲԱՎԱՅՐԵՐ.....	12
4.2 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ.....	13
4.3 ՕՐԳԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ.....	15
5. ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	16
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ.....	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	25
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	26

## *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

Քաղաքի հետագա զարգացման տեսլականից ելնելով՝ քաղաքին անհրաժեշտ է Նոր Նորքի համայնքի մանրամասն գոտիավորման նախագիծ՝ քաղաքաշինական հատակ սահմանված չափորոշիչներով, ոճային առանձնահատուկ ուղղություններով, կոմունալ ենթակառուցվածքների հետագա բարեփոխման կարիքների նկատառումներով և այլն, ինչը կնպաստի համայնքի քաղաքաշինական կանոնակարգված զարգացմանը:

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսարևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ընդհանուր տարածքը կազմում է 1411 հա, բնակչությունը 131 հազար մարդ:

Նախագծի նպատակն է մշակել Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագիծը (այսուհետև՝ գոտևորման նախագիծ), որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

### **1. Հիմնախնդիրներ և ծրագրեր**

Նոր Նորք վարչական շրջանի զարգացման միտումները բխում են մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնադրույթներից, որտեղ ներկայացված են վարչական շրջանում առկա հիմնախնդիրները:

1. Շենքերի միջբակային տարածքներում և փողոցներում լուսավորության ցանցի արդիականացման և ասֆալտապատման անհրաժեշտություն:

2. Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն:

3. Մայրերի մասնակի և կապիտալ վերանորոգման, վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:

4. Հանգստյան գոտիների ոչ բավարար քանակ:

5. Խաղահրապարակների ոչ բավարար քանակ:

6. Ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման, նոր ոռոգման ցանցի կառուցման անհրաժեշտություն:

7. Թեքահարթակների ոչ բավարար քանակ:

8. Բազմաբնակարան շենքերում սանիտարական նորմերի պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտություն:

9. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների վերանորոգման, շքամուտքերի պատուհանների փոխարինման անհրաժեշտություն:

10. Վերելակային տնտեսության արդիականացման, նոր վերելակների ձեռքբերման և տեղադրման անհրաժեշտություն:

11. Դպրոցների, մանկապարտեզների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն:

### **2019-2023 թթ. նախատեսվող ծրագրեր**

1. Նախատեսվում է իրականացնել 9000 քմ ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում և փոսերի ասֆալտապատում:

2. Նախատեսվում է 5 և ավելի բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում՝ աստիճանների, եզրաքարերի վերանորոգում, գույքի թարմացում, լուսավորության ցանցի ապահովում, մանկական խաղերի տեղադրում, հնի նորոգում, կանաչապատում, ջրագծերի վերականգնում:

3. Կիրականացվեն 2000քմ թեք տանիքների և 9000քմ հարթ տանիքների իզոգամով նորոգման աշխատանքներ:

4. Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի 5 և ավել վերելակների նորոգում և հիմնանորոգում, շարքից դուրս եկած դետալների և հանգույցների, ճուղանների փոխարինում նորերով, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

5. Կիրականացվեն 80 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:

6. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսում է 75 նստարանի, 8 զրուցատաղավարի տեղադրում, առկա նստարանների և զրուցարանների վերանորոգում և ներկում:

7. Նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Կիրականացվեն տարեկան 3500 ծառերի և թփերի տնկման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

8. Նախատեսվում է իրականացնել ոռոգման ցանցերի նորոգում՝ շարքից դուրս եկած փականների փոխարինում նորերով, խողովակների ներկում:

9. Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել 2 և ավել մանկապարտեզների վերանորոգում:

## 2. Օդերևութաբանակլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսակյունից: Բաժինը մշակված է համաձայն /1,2,3,4/:

### 2.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետությունը	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը °C	12-14	24-ից բարձր	-30-35 1/5 մ/վրկ քամու դեպքում; -25՝ 2.0 մ/վարկ -15 3.5 մ/վրկ քամու դեպքում
2. Քամու արագությունը մ/վրկ	0,5-3,0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Հարաբերական խոնավությունը	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են Հայհիդրոմետի տվյալներով և բերված են աղյուսակներ 2.2-2.4-ում:

Օդի ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին գերազանցում է 24°C: Այդ ամիսներին առկա է գերտաքացման փաստը:

12-14°C գերազանցման դեպքերը նկատվում են մայիս, հունիս և սեպտեմբեր ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից III-XI ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել:

70%-ից բարձր խոնավություն նկատվում է ձմռան 3 ամիսների ընթացքում: 3,0մ/վրկ-ից մեծ քամու արագություն դիտարկվում է հուլիս և օգոստոս ամիսներին: Դեկտեմբերից-մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C-ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արագությունը բարձր չէ և գտնվում է 0,9-1,9մ/վրկ-ի սահմաններում:

Աղյուսակ 2.2

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Երևան «Նոր Նորք»	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5

Աղյուսակ 2.3

Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Երևան «Նոր Նորք»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61

## Քամու միջին ամսական և տարեկան ազդեցությունը (մ/վրկ)

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Երևան «Նոր Նորք»	0,9	1,2	1,9	2,1	2,2	2,7	3,4	3,2	2,3	1,8	1,4	1,0	2,0

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ հուլիս և օգոստոս ամիսներին Նոր Նորք համայնքում, որտեղ հաստատվում է 1T, 2T և 3T դասերի «շոգ» եղանակ, առաջանում է անհարմարավետության շրջան առաջացնելով երրորդ աստիճանի ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: 2-րդ և 3-րդ աստիճանի անհարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը Նոր Նորք համայնքի համար կազմում է 10-16%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով Նոր Նորք համայնքի համար անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (13%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել մի շարք հատուկ միջոցառումներ:

(Рекомендации по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповых систем населенных мест. М. ЦНИИП Градостроительство 1980г.).

### **3. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ-ՆՈՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

#### **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

Նախնական գնահատման հայտը մշակված է. հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023թ. ծրագիրը հաստատելու մասին» N45-Ա և 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019

թվականի բյուջեի մասին» N47-Ն որոշումները, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 24-րդ մասը, « Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ս որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 14-ի N23 դրական եզրակացությունը՝

### ***3.1 Շրջակա միջավայրի ներկա իրավիճակի բնութագիրը.***

Նոր-Նորք համայնքի տարածքը կազմում է 1411,0 հա: Բնակչությունը ըստ նախագծային առաջադրանքի կազմում է 131.8 հազ. մարդ:

Ներկա դրությամբ Նոր-Նորք համայնքի տարածքում գործում է միջին թվով 44 ձեռնարկություն և «Հայաստան էլ. Ցանց» ՓԲԸ –ի 36 էլեկտրաէներթակայաններ:

Նոր Նորք վարչական շրջանում գտնվող հանքավայրերի /առկա և չշահագործվող/ զբաղեցրած տարածքները, հա

- Ջրվեժ թաղամասի Վարդաշենի բազալտի հանքավայր – 3.06
- «Գաջ» ՓԲԸ հ.1-ին հանքամարմին – 4.45
- «Գաջեգործ» ՓԲԸ, Ջրվեժի գիպսատար կավերի հանքավայր – 4.22
- «Վարատ» ՍՊԸ, Ջրվեժի գիպսատար ապարի և բազալտի հանքավայր – 4.82
- «Բազալտ բրոկեն» ՍՊԸ, Ողջաբերդի անդեզիտաբազալտի հանքավայրի Լեսնոյե տեղամաս – 12.66
- «Վարդաշենի հանք» ՍՊԸ, բազալտի հանքավայր – 3.21
- «Գաջ» ԲԲԸ – 4.3
- «Տիկո և Արս» ՍՊԸ, արտադրական օբյեկտ – 1.97

Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի մակերեսների, ինչպես նաև դրանց ռեկուլտիվացիայի հարցերով զբաղվում է ընդերքօգտագործողը հանքի շահագործման դադարեցումից հետո:



Նոր Նորք վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 դպրոց (5 ավագ, 15 հիմնական), 1 ԲՈՒՀ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 թանգարան, 1 հայորդաց տուն, 4 մարզադպրոց: Վարչական շրջանում գործում է 4 մշակութային հաստատություն՝ Ս.Ասլամազյանի անվան երաժշտական դպրոց, Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց, մշակույթի կենտրոն, կենտրոնական գրադարան, ինչպես նաև հայորդաց տուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայության, 2 եկեղեցի՝ Սուրբ Սարգիս և Սուրբ Աստվածածին, 1 թանգարան՝ Նանսենի անվան: Գործում է 4 մարզադպրոց՝ Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն, Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց, Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն, Երևանի Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց:

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 5 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան՝ «Նոր Նորք», «ՀՕՖ», «Զատիկ», «Առաքելություն Հայաստան», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ՀԲԸՄ» և «Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի» կրոնական կազմակերպությունները:

Նոր Նորք վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է: Շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով: Վարչական շրջանում առկա է 6 գետնանցում, 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ, 18 մինի ֆուտբոլի դաշտ և 3 լողավազան, տեղադրված է 307 մանկական խաղ և կարուսել, 150 մարզասարք, 136 զրուցարան, 750 նստարան և 276 աղբաման: Կանաչ տարածությունը կազմում է 399,18 հա, առկա է 17 զրոսայգի և պուրակ, 13 հուշարձան: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

### ***3.2 Մթնոլորտային օդը***

Ներկա դրությամբ Նոր Նորք վարչական շրջանում գործում են 30 արտադրական օբյեկտներ; 8 բազալտի, գաջի, գիպսի հանքավայրեր և 6 էներգետիկայի, տրանսպորտի օբյեկտներ:

Ներկա դրությամբ գործող ձեռնարկությունների հզորությունները չեն գերազանցում իրենց հնարավոր արտադրողականության 20% -ը և մթնոլորտի աղտոտումը նվազագույն է:

Նոր-Նորք համայնքում գործում են տարբեր մանր արտադրություններ, հիմնականում սննդի, դեղորայքի, շինարարության, փայտի մշակման ոլորտներում:

Համայնքում ջեռուցումը իրականացվում է անհատական եղանակով: Կենտրոնական ջերմամատակարարումը չի գործում, բացառությամբ մի քանի փոքր կաթսայատների: Համայնքը հիմնականում գազաֆիկացված է:

Նոր-Նորք համայնքի ձեռնարկությունների ջեռուցման և ավտոտրանսպորտից մթնոլորտը աղտոտող նյութերի համախառն արտանետումները գետեղված են թիվ 3.2.1 աղյուսակում:

Արդյունաբերական ձեռնարկություններից մթնոլորտ վնասակար արտանետումների քանակները վերցված են ձեռնարկությունների սահմանային թույլատրելի արտանետումների նախագծերից:

Ջեռուցման ժամանակ մթնոլորտ արտանետումների քանակները հաշվարկվել են գործող մեթոդակարգի համաձայն ըստ ծախսված գազի ծավալի /5,6,7/:

***Մթնոլորտն աղտոտող նյութերի համախառն արտանետումների ամփոփ աղյուսակ***

Աղյուսակ 3.2.1

Անվանումը	Վնասակարությունը	Մթնոլորտ վնասակար արտանետումները, տ/տարի		
		արդյունաբերություն	ջեռուցում	ավտոտրանսպորտ
1. Ածխածնի օքսիդ	4	1638.4	42.54	43820.0
2. Ածխաջրածիններ	4	0.012	-	4378.24
3. Ազոտի օքսիդներ	2	296.3	99.2	2394.0
4. Եռակցման աերոզոլ	3	0.044	-	-
5. Մանգանի օքսիդներ	2	0.0132	-	-
6. Մետաղական և աբրազիվ փոշի	3	0.616	-	-

7.Ցեմենտի փոշի	3	111.32	-	-
8. Քրոմի օքսիդներ	1	0.003	-	-
9.Փայտափոշի	3	0.776	-	-
10.Քացախաթթու	3	0.544	-	-
11.Ացետոն	3	0.86	-	-
12.Ամոնիակ	4	3.0	-	-
13.Էթանթիոլ	-	0.0025	-	-
14.Թուրունի փոշի	3	2.0	-	-
15.Տոլուոլ	3	0.93	-	-
16.Անօրգանական փոշի	3	632.24	-	-
17. Ալրափոշի	3	0.8	-	-
18.Սինթետիկ լվացող միջոցներ	2	0.0023	-	-
19.Մեթան	4	58.9	-	-
20. Էթան	4	6.38	-	-
21. Պրոպան	4	2.2	-	-
22. Երկաթի օքսիդներ	3	0.0033	-	-
Ընդամենը		2755.34	141.74	50592.24

Աղտոտող աղբյուրներից մթնոլորտ արտանետվող հիմնական նյութերի զանգվածը կազմում է 53489.32 տ/տարի, այդ թվում արդյունաբերություն-2755.34 տ/տարի, ջեռուցում-141.74 տ/տարի, ավտոտրանսպորտ – 50592.24 տ/տարի, որոնցից առավել հանդիպողները հետևյալն են՝ ածխածնի և ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ, ցեմենտի և անօրգանական փոշիներ:

Մթնոլորտային վնասակար արտանետումներից շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան 2231.57 մլն դրամ:

Նոր-Նորք համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները (մգ/մ<sup>3</sup>), տրված ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ կողմից բերված է աղյուսակ 3.2.2-ում ( 2019թ. միջինացված արդյունքներ )

Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները  $U_x = 6n/v^3$ 

No	Աղտոտող նյութերի անվանումները	Մթ-Կառ.միան. մգ/մ <sup>3</sup>	Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ <sup>3</sup>
1	Ծծմբի երկօքսիդ	0,5	0.015
2	Ազոտի երկօքսիդ	0.2	0.0149
3	Օզոն	0.16	0.005
4	Ածխածնի մոնօքսիդ	5	1.035
5	Փոշի	0.5	0.096

Ինչպես երևում է աղյուսակից, Նոր-Նորք համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի կոնցենտրացիաները գտնվում են նորմերի սահմաններում:

### **3.3 Մակերևութային ջրահոսքեր**

Ներկա իրավիճակում Երևան քաղաքի կոյուղու կոլեկտոր ուղղվող հոսքաջրերից Հրազդան գետի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան 977.16 մլն. դրամ, այդ թվում՝

տնտեսակենցաղային հոսքաջրերից – 815.56 մլն.դրամ

արտադրական հոսքաջրերից - 18.6 մլն.դրամ (մաքրման կայաններից հետո)

անձրևային հոսքաջրերից – 143 մլն.դրամ

### **3.4 Հողերի բնութագիրը**

Նոր-Նորք վարչական շրջանը զբաղեցնում է 1411.0 հա տարածք, այդ թվում՝

Գյուղատնտեսական հողեր- 0 հա

Բնակավայրեր- 1065.5 հա

Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր – 167.6 հա

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր – 33.6 հա

Հատուկ պահպանվող տարածքների հողեր – 34.0 հա

Հատուկ նշանակության հողեր – 109.9 հա

Անտառային հողեր – 0 հա

Ջրային հողեր – 0.5 հա

Պահուստային հողեր – 0 հա

Նոր-Նորքի համայնքի հողերը, ըստ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դասվում են թույլ աղտոտվածությամբ հողերի դասին (ԽԳՑ<8): Հողերի աղտոտման մակարդակը գնահատվում է թույլ (ցածր), աղտոտվածության դասը – թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը- համեմատաբար բավարար:

### **3.5 Աղմուկի մակարդակը /8,9/**

Նոր-Նորք համայնքի աղմկային ֆոնը հիմնականում ձևավորվում է տրանսպորտի հաշվին: Ներկայումս տրանսպորտային հոսքերում գերակշռող մասը (93-97%) կազմում է թեթև մարդատար ավտոմեքենաները և միկրոավտոբուսները:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը մշտական չէ, և որպես նրա աղմուկի բնութագիր ընդունվում է ձայնի համարժեք էներգիայի մակարդակը՝  $L_{A, համ. դԲԱ}$ : Համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի դեպի աղմուկի աղբյուրն ուղղված շենքերի համար թույլատրվում է ձայնի համարժեք մակարդակի բարձրացում 5 դԲԱ-ով երթևեկության շերտից 7.5 մ հեռավորության վրա և տրանսպորտային հոսքերի աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի ցերեկը՝ 65 դԲԱ, գիշերը՝ 55 դԲ, իսկ առավելագույն մակարդակը՝ 80 դԲԱ:

Ներկայումս Նոր-Նորքի բարձր տրանսպորտային հոսքերը անցնում են Մյասնիկյան և Գայի պողոտաներով, որտեղ աղմուկի համարժեք և առավելագույն մակարդակը համայնքի փողոցներին կից կառուցապատման սահմանագծում պիկային ժամերին գերազանցում են թույլատրելի մակարդակը համապատասխանաբար՝ 6-11 դԲԱ-ով և 2-11 դԲԱ-ով:

## **4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

### **4.1 Աղբավայրեր**

Նոր Նորք համայնքում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1065,5 հա մակերես: Համայնքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից: Այդ նպատակով բնակելի շենքերին հարող տարածքներում տեղադրված է  $\approx 210$  միավոր աղբահավաք կոնտեյներ: Նոր Նորք համայնքում գտնվում են բարձրահարկ շենքեր աղբամուղով: Հաճախակի են աղբամուղերի խցանումը և աղբի կուտակումը հենց շենքերի բակերում:

Աղբահավաք կոնտեյներները, աղբանոթները, աղբահավաք խցերը չեն լվացվում և ախտահանվում: Աղբատար փախաղբամիջոցների թափքերը, համապատասխան անհրաժեշտ պայմաններ չլինելու պատճառով, նույնպես չեն լվացվում և ախտահանվում:

Որպես համայնքի աղբավայր ծառայում է Սովետաշենի աղբավայրը:

Սակայն հիգիենիկ և համաճարակային տեսչության Երևանի Նոր Նորք տարածքային կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- հատկացված տարածքը կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասագերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հողամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում «Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմեր» ՄՆ թիվ 245-71 և «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 2.07.01-81 ԱՆ և Կ պահանջներին: Տարածքը պարսպապատված չէ, անբարեկարգ է, չկան համապատասխան պայմաններ, կոնտեյներների և աղբատար փախաղբամիջոցների լվացման և ախտահանման համար:

Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են:

Երևան քաղաքի աղբահանության գործընթացի կարգավորմանն ու վերջինիս գործող օրենսդրությանը համապատասխանեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը դեռևս գտնվում է մշակման փուլում /Երևանի քաղաքապետարան/:

Նոր Նորք համայնքում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը բերված են աղյուսակ 4.1-ում:

Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 32950 տ/տարի:

Աղյուսակ 4.1.

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Սննդային թափոններ	21.3	7018.35

Թուղթ	13.3	4382.35
Փայտանյութ	6.9	2273.35
Պլաստասաներ	19.4	6392.3
Ռետին և կաշի	2.0	659.0
Տեքստիլ	2.8	922.6
Ապակի	5.4	1779.3
Երկաթ և նրա համաձուլվածքները Գունավոր մետաղներ	1.9	626.05
Այլ թափոններ	27.0	8896.5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>100</b>	<b>32950.0</b>

#### 4.2 Արդյունաբերական թափոններ

Թափոնները առաջանում են արդյունաբերական օբյեկտներում:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 3000 տ/տարի:

Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա
- ոչ օգտագործելի:

Բազալտի, գաջի մշակման ձեռնարկությունների թափոնները նույնպես դասվում են օգտագործվող թափոնների շարքը (օգտագործվում են անհատական շինարարության մեջ): Ավտոտրանսպորտային օբյեկտներում առաջացած յուղի թափոնները տեղում ենթարկվում են զտման: Զտված յուղերին ավելացվում է նորը և կրկնակի օգտագործվում:

Օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1500 տ/տարի:

Ոչ օգտագործելի թափոնների գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանէպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 1500 տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը բերված է աղյուսակ 4.2.1-ում:

## Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
1	2	3
1. Օգտագործման ենթակա թափոններէ յուղեր, թեփեր	10	0.7
2. Շինարարական օգտագործելի թափոններ	1490	49.3
3. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ	1500	50
ԸՆԴԱՄԵՆԸ	3000.0	~100

Քանի որ, համայնքը չունի արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայրում:

### 4.3 Օրգանական ծագման թափոններ

Թափոններ առաջանում են նաև առողջապահության բնագավառի հաստատություններում՝ հիվանդանոց, ակնաբուժական և վնասբարանության, սրտաբանական կենտրոններ:

Թափոնները դասակարգվում են /19/ հետևյալ կերպ՝

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90%: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 1-3 տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀԿ-ի կողմից հատկացված աղբավայր:

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 150 կգ/օր:

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

N 1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):



N 4 կարգ - առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N 6 կարգ - Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

I կարգի թափոնները ներկա իրավիճակում ենթակա են այրման հրկիզման վառարանում, 150 կգ/օր արտադրողականության: Քննարկվում է նաև թափոնների թաղման տարբերակը մոտակա գերեզմանատանը հատկացված հատուկ տարածքում:

Բժշկական թափոնները հավաքվում և տեղափոխվում են բժշկական թափոնների պահման համար նախատեսված պահեստ, որտեղ կողմնակի անձանց մուտքն արգելվում է, որից հետո հանձնվում են «Էկոլոգիա Վ.Գ.Հ.» ՍՊԸ-ին /կնքվում է համապատասխան պայմանագիր/:

Ընդհանրապես Երևան քաղաքի առողջապահական հիմնարկների համար անհրաժեշտ է մշակել վարակիչ թափոնների վարակազերծման, ինչպես նաև մարդու անատոմիական թափոնների ոչնչացման ժամանակակից տեխնոլոգիաներ: Այս առաջարկը քաղաքի գլխավոր հատակագծում բացակայում է:

## 5. Կանաչապատման համակրգը

Նոր Նորք համայնքի մեծածավալ նպատակասլաց կանաչապատումը սկսվել է անցյալ դարի 80-ական թվականներին: Այդ ժամանակահատվածում են սկսվել զբոսայգիների, պուրակների, փողոցների կանաչապատման աշխատանքները: Կանաչապատման համար օգտագործվել են շուրջ 200 ծառաթփային տեսակներ:

Նոր Նորք համայնքի համար տարբեր ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկների բաշխումը և բնակչության ապահովվածությունը բերված է աղյուսակ 5.1-ում:

Ըստ ֆունկցիոնալ նշանակության, համայնքի համար չափազանց կարևոր է ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների նշանակությունը:

Նոր Նորք համայնքի կանաչ զանգվածների ցուցանիշները

Աղյուսակ 5.1.

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Կանաչ զանգվածները	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի	70.2	5.33
2. Սահմանափակ օգտագործման	213.1	16.17

3. Հատուկ նշանակության	109.9	8.34
ԸՆԴԱՄԵՆԸ	393.2	29.84

✓ Ընդհանուր օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ համայնքային զբոսայգիներն ու պուրակները, որոնք նախատեսված են համայնքի բնակչության կարճատև հանգստի կազմակերպման համար:

✓ Սահմանափակ օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ տարբեր հասարակական նշանակության ու արտադրական ձեռնարկությունների տարածքներում գտնվող կանաչապատ զանգվածները:

✓ Հատուկ նշանակության կանաչապատմանն են վերագրվում՝ սանիտարապաշտպանական նպատակներով իրականացված կանաչապատ զանգվածները, այդ թվում նաև փողոցների ու մայրուղիների մայթերի եզրերի կամ երթևեկելի մասի բաժանիչ շերտերի կանաչապատումը:

Ինչպես երևում է աղյուսակ 5.1-ից, 1 շնչին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը զգալիորեն ցածր է ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018թ. N108-Ն որոշմամբ հաստատված նորմայից՝ 10 մ<sup>2</sup>/մարդ /մեծ, խոշոր և խոշորագույն քաղաքներ/:

Նոր Նորք համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսների դեֆիցիտը նորմատիվային ցուցանիշի համեմատությամբ կազմում է 61.55 հա կամ 4.67 մ<sup>2</sup>/մարդ:

#### *6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԻՑ ՀԵՏՈ*

Նոր-Նորք վարչական շրջանի զարգացման միտումները բխում են մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնադրույթներից և ներկայացված են վարչական շրջանում առկա հիմնախնդիրներում:

2020-2023 թթ նախատեսվող առաջնահերթ միջոցառումների ցանկը.

1. բակային տարածքների ամբողջական բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում

2. արտաքին լուսավորության ապահովում, ներառյալ չլուսավորվող փողոցներում և տարածքներում

3. հանգստի գոտիների և ջրավազանների ստեղծում

4. կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնում

5. տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար ենթակառուցվածքների (թեքահարթակներ) ստեղծում

6. անվտանգ տեղաշարժն ապահովելու համար անցումների ընթացիկ նորոգում և կառուցում

7. բնակչության առողջապահության որակի բարձրացում, ներառյալ սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավում, գույքի արդիականացում, վերազինում

8. կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում

9. հարթ և թեք տանիքների վերանորոգում

10. կոյուղագծի անցկացում և դիտահորերի հիմնանորոգում

11. հենապատերի ընթացիկ և հիմնական նորոգում

12. բնակչություն, ներառյալ իրավաբանական և ֆիզիկական անձանց և վարչական շրջանի աշխատակազմ հետադարձ կապի ապահովում և առավել թափանցիկության ապահովում

13. քաղաքաշինական միջավայրի բարելավում և արդյունավետ հողօգտագործում:

Վարչական շրջանի բոլոր կրթօջախները ջեռուցվում են:

Գոտիավորման նախագծով նախատեսված նախագծային որոշումները ուղղված են բնակչության ապրելակերպի սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավմանը, շրջակա բնական միջավայրի և բնաանտրոպոգենային էկոհամակարգերի պահպանմանը և վերականգնմանը, տարածքի՝ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանմանը: Հատակագծային որոշումները հաշվի են առնում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և Նոր-Նորք տարածքային բնապահպանական տեսչության առաջարկները:

Միաժամանակ հատակագծային ստրուկտուրայի, համալիրի տրանսպորտային համակարգի, ինժեներային ենթակառուցվածքների և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների կատարելագործման հետ մեկտեղ, գոտիավորման նախագծով նախատեսվում են՝

- Սանիտարա-պաշտպանիչ գոտիների կազմակերպում, բարեկարգում և կանաչապատում;

- Խախտված տարածքների վերականգնում (շահագործվող հանքերի կոնսերվացման նախագծերի մշակումից հետո);

Մթնոլորտային օդ. Համայնքի մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրները հեռանկարում դարձյալ կմնան գործող արդյունաբերական օբյեկտները, ջերմային աղբյուրները և ավտոտրանսպորտը:

Հեռանկարում համայնքի բազմաբնակարանային շենքերի ջեռուցման համար կնախատեսվեն նոր , ժամանակակից կաթսաների տեղադրում:

Հեռանկարում ջերմային աղբյուրներից մթնոլորտ արտանետումները կաճեն, սակայն, ընդհանուր առմամբ, չեն գերազանցի ՍԹԱ նորմատիվները:

Քանի որ գոյություն չունի հաստատված տնտեսական զարգացման ծրագիր, ընդունում ենք, որ առկա արտադրական ձեռնարկությունների հնարավոր վերաշահագործումը կկազմի 50-60%:

Մասնավոր տները ջեռուցվում են անհատապես:

Արտանետումների ընդհանուր ծավալը կարող է հասնել տարեկան մինչև 63370տ, որից 160տ կկազմեն էներգետիկայի օբյեկտների արտանետումները, արդյունաբերությունը՝ 4500տ և ավտոտրանսպորտը՝ 60710տ:

Արտանետումների նվազեցման հիմնական ուղղությունը ջերմամատակարարման համակարգերի էներգաարդյունավետության բարձրացումն է:

Համայնքի օդի փոշոժ աղտոտվածության մակարդակի նվազեցման միջոցառումները շինարարական աշխատանքներ անցկացնելիս թաց փոշեզերծման մեթոդների կիրառումն է, փողոցների կանոնավոր թաց սանիտարական մաքրումը, Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված կանաչ տարածքների վերականգնումը և ընդլայնումը:

Համայնքի մթնոլորտային օդի պահպանության հիմնական ուղղությունը՝ ավտոտրանսպորտից, արդյունաբերական օբյեկտներից արտանետումների նվազեցումն է, որը ապահովվելու է վերոհիշյալ միջոցառումների հաշվին:

Համայնքի արդյունաբերական հեռանկարային զարգացման անորոշության պատճառով դժվար է կանխատեսել արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների ծավալները: Համայնքի տարածքում գործող արդյունաբերական

ձեռնարկությունների համար նախատեսված են էկոլոգիական սահմանափակումներ, որոնք պետք է պահպանվեն, անկախ արտադրությունների զարգացման ուղղությունից և տեմպերից:

Արդյունաբերական գոտիների սահմաններում օդի աղտոտման նորմատիվային մակարդակ ապահովելու համար, յուրաքանչյուր աղտոտող նյութի համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները՝

$SM_{ji} \leq U\theta U$ , որտեղ

$SM_{ji}$  –  $j$  գոտու ( $j=1, 2, \dots, m$ ) ձեռնարկությունների աղբյուրներից արտանետվող  $i$  նույնանուն նյութերի ( $i=1, 2, \dots, n$ ) գումարային զանգվածն է;  $u$ /տարի

$U\theta U$   $i$  – տվյալ արդյունաբերական գոտու համար  $i$  նյութի սահմանային թույլատրելի արտանետման գումարային նորմատիվն է:

Արդյունաբերական ձեռնարկությունների համար արտանետումների թույլատրելի քանակները սահմանվում են ըստ  $C_{max}$ -ի (առավելագույն կոնցենտրացիաների):

$C_{max} \leq 1 U\theta U$  (սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանում):

- շինարարական արդյունաբերական ձեռնարկություններում ուժեղացնել հսկողությունը փոշու կազմակերպված և անկազմակերպ արտանետումների վրա:

- նոր արդյունաբերական տարածքների կենտրոնացումը գոյություն ունեցող արդյունաբերական շրջանների տարածքներում, ինչը կնպաստի նաև վնասակար թափոնների կենտրոնացված կառավարմանը և չեզոքացմանը:

- արդյունաբերական շրջանի տարածքներում թույլատրել IV, V կարգի ձեռնարկությունների շահագործում: Ցածր կարգի ձեռնարկությունների դեպքում կատարել սանիտարա-պաշտպանիչ գոտու ճշգրտում:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված քաղաքի փողոցա-ճանապարհային ցանցի ուրվագծի իրականացումը, որով նախատեսվում է Նոր-Նորք համայնքի բեռնաթափումը տարանցիկ տրանսպորտից, տրանսպորտային ուղեբաժանքների և նոր բաշխիչ մայրուղիների և ստորգետնյա ավտոկանգնակների կառուցումը և այլն:

Համայնքի ճանապարհային ծածկի բարելավում, նոր մայրուղիների երկարացումը տեսակային կայուն կազմով պաշտպանիչ կանաչ շերտերի ստեղծում:

Ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում և փողոցների թողունակության բարձրացում:

Հաշվարկային ժամկետի վերջում (2023թ) քաղաքային հասարակական ավտոտրանսպորտում էլեկտրաֆիկացված տրանսպորտի մասնաբաժնի ավելացում՝ տրոլեյբուսի 1,1%-ից մինչև 24,1%, ինչպես նաև մեծ և միջին տարողության ավտոբուսների մասնաբաժնի ավելացում 1,9%-ից մինչև 45%, և միկրոավտոբուսների մասնաբաժնի կրճատում 93%-ից մինչև 19% :

Ավտոմոբիլային պարկի աստիճանաբար նորացում:

Խտացրած բնական գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների ավելացում մինչև 50%:

Ավտոմոբիլների զինումը արտանետվող գազերի չեզոքացուցիչներով:

Մթնոլորտային օդի պահպանության կազմակերպչական և վարչական բնույթի միջոցառումների թվին պետք է դասել համայնքի օդի աղտոտման աղբյուրների լրիվ հաշվառումը, նորմատիվների պահպանման հսկողության ուժեղացումը, մոնիտորինգի ցանցի ընդլայնումը:

Նշված միջոցառումները համահունչ են ՀՀ Կառավարության «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 17.09.2006թ. N 1033-Ն որոշմանը:

Հաշվարկային ժամկետի վերջում Նոր-Նորք համայնքում սպասվում է ավտոտրանսպորտային միջոցների մոտ 20% ավելացում: Միտման պահպանվելու դեպքում ավտոտրանսպորտից արտանետումները կհասնեն տարեկան 60 հազ. տ: Նշված միջոցառումների համալիր իրականացումը հեռանկարում կընձեռնի ավտոտրանսպորտից արտանետումները ամբողջ քաղաքի համար կրճատել մինչև 48-50 հազ. տ և ապահովել Երևան քաղաքի և Նոր-Նորք համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածության թույլատրելի մակարդակը:

### **Մակերևութային ջրեր.**

Հեռանկարում բնակչության և միջին օրական ջրապահանջի աճի նախատեսված 200լ/օր-մարդ նորմայի դեպքում, կոյուղու համակարգի ընդլայնման և արդյունաբերական օբյեկտների հզորությունների աճի հետ մեկտեղ կավելանա նաև

Երևան քաղաքի կոյուղու կոլեկտոր, այնուհետև Հրազդան գետ թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի քանակը մոտ 1.5 անգամ:

Բնապահպանական միջոցառումների առկա վիճակի դեպքում սպասվում է Հրազդան գետ թափվող աղտոտող նյութերի քանակների աճ:

Կենսաբանական մաքրման կայանում մեխանիկական մաքրումից հետո գետի աղտոտման հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կգնահատվի  $\approx 912.7$  մլն դրամ/տարի:

Նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի բարելավմանը:

Բոլոր արդյունաբերական օբյեկտներում տեղական մաքրման կայանքների պարտադիր ապահովումը և կոյուղի թափվող հոսքաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների պահպանումը:

Հրազդան գետի ջրի նորմատիվ վիճակը հնարավոր է ապահովել դիտարկելով գետի աղտոտման կանխումը ջրավազանի մակարդակով: Մինչև Երևան քաղաքի սահմանագիծ մտնելը Հրազդան գետի ջրապաշտպան միջոցառումները՝ մասնավորապես Գագարինի և Քաղսիի մաքրման կայանների վերակառուցումը, գետամերձ բնակավայրերի կեղտաջրերի կոյուղացումը և այլն, նախատեսված են Երևանի ազլոմերացիայի տարածքային զարգացման հատակագծում:

Նոր-Նորք համայնքի սահմաններում նախատեսվում է իրականացնել գործող հեղեղատար կոյուղու ցանցերի բեռնվածքներից մաքրում և վերանորոգում, նոր կոլեկտորների կառուցում

Ջրապաշտպան գործունեության կառավարման արդյունավետության և ջրային օբյեկտների վիճակի ստույգ գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ կազմակերպչական միջոցառումները՝

- Հաշվառման վերցնել աղտոտման բոլոր աղբյուրները, կեղտաջրերի քանակը և կազմը, սահմանել հսկողություն

- ընդլայնել հսկվող աղտոտիչ նյութերի քանակը:

**Հողերը** Բնչպես նշվել էր Երևան քաղաքի գլխավոր հատակագծում վերջին 15 տարիների ընթացքում Նոր-Նորք համայնքում կտրկուկ նվազել է ծանր մետաղների ներհոսքը շրջակա միջավայր և նրանց հետագա կուտակումը համայնքի

հողածածկույթի բաց հատվածներում: Այդ նվազումը հինականում պայմանավորված է ավտոտրանսպորտում ոչ էթիլացված բենզինի և սեղմված բնական գազի օգտագործմամբ, մագուրի օգտագործման դադարեցմամբ:

Հեռանկարում համայնքում չի սպասվում ծանր մետաղների նոր աղբյուրների գոյությունը: Հողերի ինքնամաքման ունակությունը և առավել աղտոտված հատվածների առողջացման իրականացումը (ագրոտեխնիկական միջոցառումներ, կանաչապատում և այլն) կհանգեցնի համայնքի փոքր հատվածում հողերի աղտոտվածության նվազման: Տարածքը կդիտարկվի աղտոտվածության թույլ գոտի (ԽԳՑ < 8): Ըստ փորձնական գնահատականների, աղտոտվածության ընդհանրացված շարքը ներկայացված կլինի տարրերի հետևյալ հերթականությամբ՝ Pb(1,6) – Ag(1.5) – Zn(1.4) – Cr(2.4) – Cu(1.2) – Ni(1,7) – Co(1,3) – Mo(1.0)

**Աղմուկը** Հեռանկարում Նոր-Նորք համայնքի աղմկային ֆոնը դարձյալ հիմնականում կձևավորվի տրանսպորտի հաշվին: Հաշվի առնելով, որ տրանսպորտային աղմուկի գերնորմատիվային մակարդակը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների աճի տեմպերի գերազանցմամբ, փողոցա-ճանապարհային ցանցի զարգացման տեմպերով, աղմուկի մակարդակի իջեցմանը կնպաստի Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված փողոցա-ճանապարհային ուրվագծի իրականացումը:

Ներկայումս տրանսպորտային հոսքերում գերակշռող մասը (93-97%) կազմում են թեթև մարդատար ավտոմեքենաները և միկրոավտոբուսները:

Փողոցա-ճանապարհային ցանցի զարգացման ուրվագծի իրականացումից բացի տրանսպորտային աղմուկի նվազեցմանը կնպաստեն հետևյալ միջոցառումները՝

- համայնքի ճանապարհային ծածկի բարելավում, նոր մայրուղիների երկարությամբ կանաչ պաշտպանչ շերտերի ստեղծում;

- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում և փողոցների թողունակության բարձրացում;

- տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկողության ուժեղացում:

Աղմկային անհարամարվետությունը նվազագույնի հասցնելուն մեծապես կնպաստի աղմուկապաշտպան պատուհանների և աղմուկամեկուսիչ ապակեպատման լայն կիրառությունը:



Աղմուկից պաշտպանվելու նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա համայնքի հիմնական մայրուղիներում աղմուկի մակարդակը նվազեցնել և բնակելի կառուցապատման մեծ մասում ապահովել աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակ:

### **Թափոնների կառավարում**

2020-2023 թթ բնակչության քանակի աճի հետ կավելանան նաև կենցաղային թափոնների քանակը՝ 33300 տ/տարի:

Սպասվում է նաև արդյունաբերական թափոնների աճ 10-20%-ի չափով՝ 3300 տ/տարի, որից ոչ օգտագործելի թափոնների քանակը կկազմի 1650 տ/տարի: Ընդհանուր առմամբ Սովետաշենի աղբավայր տեղափոխվող թափոնների քանակը կկազմի 34950 տ/տարի:

Ինչպես ներկայում, այնպես էլ հեռանկարում, Երևան քաղաքի համար առաջնային է մնում աղբահանության և աղբամշակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը:

### **Կանաչապատման համակարգը**

2023 թ. համայնքի բնակչության կանխատեսվող թվաքանակի պայմաններում /133.2 հազ. մարդ/ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով բնակչության ապահովման դեֆիցիտը կկազմի 63.5 հա կամ 4.72 մ<sup>2</sup>/մարդ:

Նոր Նորքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները՝

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարանում,
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը,
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում:

Նախատեսված են այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախատեսված է նաև

մագիստրալ ճանապարհների և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում: Նախատեսվում են տարեկան 3500 հատ ծառերի և թփերի տնկման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

## **Եզրակացություն**

Նախատեսվող աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ Նոր-Նորք տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Руководство по составлению раздела «Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами» в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М., 1982г.
2. Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М 1986г.
3. Շինարարական կլիմայաբանություն. ՀՀ II-7.01-2011:
4. Рекомендзции по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповех систем населенных мест, М. ЦХИИП, Градостроительство, 1980г.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными проиводствами. Л., Гидрометеоиздат, 1986г.
6. Методические указания по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным траспостом. М., Гидрометеоиздат, 1983г.
7. ՀՀ կառավարության որոշում` 25 հունվարի 2005 թվականի N-91-Ն. Տնտեսական գործնեության հետևանքով առաջացած աղբեցության գնահատման կարգը հաստատելու մասին:
8. СНиП II-12-77. Защита от шума. М., 1978г.
9. ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»: